ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2024 թվականի N 1376 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1132-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետում «դիվանագիտական կամ հյուպատոսական հիմնարկներում» բառերը փոխարինել «դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում» բառերով,

բ. 7-րդ կետի 4-րդ ենթակետում «ժամկետների վերաբերյալ ծանուցումը» բառերը փոխարինել «վերաբերյալ ծանուցումը՝ օրենքի և սույն կարգի պահանջների համաձայն» բառերով,

գ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած), ներառյալ օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված կամ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված և շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային համապատասխան ծառայության զորակոչվելու դիմում ներկայացրած (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եղանակով և 6-րդ մասով սահմանված կարգով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին՝ համաձայն N 2 ձևի:»,

դ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիներին օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված առաջնային ծանուցման անհնարինության դեպքում հանրապետական զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչի հայտարարման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում արտաքին գործերի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմնի միջոցով համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է տվյալ դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիների անվանացուցակն ու յուրաքանչյուր քաղաքացու անունով լրացված N 2 ձևի ծանուցագիրը՝ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից ծանու-

ցագիրը քաղաքացուն առձեռն հանձնելու նպատակով: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը ծանուցված քաղաքացիների անվանացուցակը և ստացականները, ինչպես նաև չծանուցված քաղաքացիների անվանացուցակը՝ նշելով չծանուցման պատճառը և նրանց անունով լրացված ծանուցագրերը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը և նոյեմբերի 20-ը էլեկտրոնային եղանակով ներկայացնում են հանրապետական զինվորական կոմիսարիատ, որի կողմից չծանուցված քաղաքացիների հրապարակային ծանուցումն իրականացվում է օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով:»,

ե. 24-րդ կետում «մարմնում» բառը փոխարինել «ներկայացուցչությունում» բառով,

զ. NN 2 և 13 ձևերի վերջին նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծանուցագիրը քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու կամ հրապարակային ծանուցման կամ փոստային պատվիրված նամակով հանձնելու դեպքերում ստացականը չի լրացվում:».

2) 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածում՝

ա. 5-րդ և 19-րդ կետերում «մարմնում» բառը փոխարինել «ներկայացուցչությունում» բառով,

բ. 6-րդ կետի 4-րդ ենթակետում «ժամկետների վերաբերյալ ծանուցումը» բառերը փոխարինել «վերաբերյալ ծանուցումը՝ օրենքի և սույն կարգի պահանջների համաձայն» բառերով,

գ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամ-

կետը լրացած) (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եղանակով և 6-րդ մասով սահմանված կարգով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին՝ համաձայն N 2 ձևի:».

դ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիներին օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված առաջնային ծանուցման անհնարինության դեպքում հանրապետական զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչի հայտարարման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում արտաքին գործերի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմնի միջոցով համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է տվյալ դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիների անվանացուցակն ու յուրաքանչյուր քաղաքացու անունով լրացված N 2 ձևի ծանուցագիրը՝ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնելու նպատակով: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը ծանուցված քաղաքացիների անվանացուցակը և ստացականները, ինչպես նաև չծանուցված քաղաքացիների անվանացուցակը՝ նշելով չծանուցման պատճառը և նրանց անունով լրացված ծանուցագրերը մինչև տվյալ տարվա նոյեմբերի 20-ը էլեկտրոնային եղանակով ներկայացնում են հանրապետական զինվորական կոմիսարիատ, որի կողմից չծանուցված քաղաքացիների հրապարակային ծանուցումն իրականացվում է օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով:»,

ե. NN 2 և 10 ձևերի վերջին նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծանուցագիրը քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու կամ հրապարակային ծանուցման կամ փոստային պատվիրված նամակով հանձնելու դեպքերում ստացականը չի լրացվում։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ